

11/03/2008
համար 70 Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
24.02.09թ. թիվ 40-Ն, 16.03.10թ. թիվ 48-Ն, 22.06.10թ. թիվ 142-Ն, 28.09.10թ. թիվ 247 Ն,
03.04.12թ. թիվ 78 Ն, 07.08.12թ. թիվ 213 Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝
Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները» համաձայն
հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների պատրաստման,
հաստատման, հրատարակման, բաշխման և թարգմանության կարգը հաստատելու
մասին» 2005 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 456 Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Տիգրան Սարգսյան

Հավելված 1
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 70Ն որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ
ԹՈՂԱՐԿՍԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՍԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) կողմից պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները:

2. Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարբերականներն են.

1) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր» (ամսական), որը ներառում է.

ա. Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ և անհատական որոշումները, Կենտրոնական բանկի նախագահի որոշումները, որոնք առնչվում են Կենտրոնական բանկի խնդիրներին ու գործառույթներին, ինչպես նաև այլ իրավական ակտեր,

բ. Դրամավարկային ամփոփագիր (Տոկոսադրույքի արձանագրություն),

գ. Վիճակագրական հավելված:

2) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանբեր» (եռամսյակային), որը ներառում է.

ա. ՀՀ ֆինանսական ոլորտի զարգացումները,

բ. Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը,

գ. Կենտրոնական բանկի եռամսյակային հաշվեկշիռը (բացառությամբ չորրորդ եռամսյակի),

դ. Վիճակագրական հավելվածը,

ե. Տեղեկատվություն «ՀՀ միջազգային պահուստների վիճակի և կազմի» վերաբերյալ (բացառությամբ չորրորդ եռամսյակի),

զ. Կենտրոնական բանկի աշխատակիցների հետազոտական և վերլուծական նյութեր:

(2-րդ ենթակետը փոխվել է 24.02.09թ. թիվ 40 Ն որոշմամբ):

3) «Գնաճի հաշվետվություն» (եռամսյակային), որը ներառում է.

ա. Դրամավարկային քաղաքականության ծրագիրը (հաջորդ ժամանակաշրջանի համար),

բ. Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (նախորդ ժամանակաշրջանի համար):

(3-րդ ենթակետը փոխվել է 16.03.10թ. թիվ 48 Ն որոշմամբ, որից հետո շարադրվել է նոր խմբագրությամբ 07.08.12թ. թիվ 213Ն որոշմամբ):

3.1) (3.1-րդ ենթակետը լրացվել է 16.03.10թ. թիվ 48 Ն որոշմամբ, որից հետո ուժը կորցրել է 07.08.12թ. թիվ 213 Ն որոշմամբ):

4) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն», որը ներառում է.

- ա. Ուղերձի խոսք
- բ. Կառավարում և հաշվետվողականություն
- գ. Ռ-ազմավարական ուղղությունների ամփոփում
- դ. Դրամավարկային քաղաքականություն
- ե. Ֆինանսական կայունություն, կարգավորում և վերահսկողություն
- զ. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար
- է. Կառավարում և կազմակերպչական զարգացում
- ը. Հասարակայնության հետ կապեր
- թ. Ռիսկի կառավարում և աուդիտ
- ժ. Տարեկան ֆինանսական հաշվետվություններ:

(4-րդ ենթակետը լրացվել է 16.03.10թ. թիվ 48 Ն որոշմամբ, որից հետո նոր խմբագրությամբ շարադրվել է 28.09.10թ. թիվ 247 Ն որոշմամբ):

5) «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունը, որը ներառում է.

- ա. Նախաբան,
- բ. Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը,
- գ. Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ,
- դ. Վերահսկողությունը 200* թվականին,
- ե. Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ,
- զ. ՀՀ ֆինանսական համակարգը 200* թվականին,
- է. Վճարահաշվարկային համակարգ,
- ը. Վերահսկողության զարգացման հեռանկարները,
- թ. Հավելվածներ:

6) «Ֆինանսական կայունության հաշվետվություն» (կիսամյակային), որը ներառում է.

- ա. Նախաբան
- բ. Համաշխարհային տնտեսության զարգացումները,
- գ. Ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրում,
- դ. ՀՀ Ֆինանսական շուկայի կայունությունը,
- ե. ՀՀ ֆինանսական հաստատությունները,
- զ. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառույցներում:

(6-րդ ենթակետը փոխվել է 03.04.12թ. թիվ 78 Ն որոշմամբ):

7) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր» (տարեկան), որը ներառում է.

- ա. Իրական հատվածի ցուցանիշները,
- բ. Արտաքին հատվածի ցուցանիշները,
- գ. Պետական բյուջեի ցուցանիշները,
- դ. Դրամավարկային ցուցանիշները,
- ե. Արտաքին պահուստները,
- զ. Ֆինանսական շուկան. գործիքները, տոկոսադրույքները, փոխարժեքները,

- է. ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները,
- ը. ՀՀ առևտրային բանկերի ավանդները,
- թ. ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և տնտեսական նորմատիվներին համապատասխանությունը,
- ժ. Վճարահաշվային համակարգ,
- ի. Այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

8) «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» (տարեկան), որը ներառում է.

- ա. Յուրաքանչյուր տարի թողարկվող ՀՀ հուշադրամների մասին տեղեկատվություն,
- բ. Կենտրոնական բանկի հետ համագործակցող դրամահատարանների վերաբերյալ տեղեկատվություն,
- գ. ՀՀ հուշադրամների մասնակցությամբ մրցույթներ,
- դ. Կենտրոնական բանկի կողմից թողարկված բոլոր հուշադրամների ցանկը՝ ըստ շարքերի և թողարկման տարեթվի,
- ե. ՀՀ հուշադրամների թողարկման ամենամյա ծրագիրը,
- զ. ՀՀ հուշադրամների հետ առնչվող այլ նյութեր:

(8-րդ ենթակետը լրացվել է 22.06.10թ. թիվ 142 Ն որոշմամբ):

3. Կենտրոնական բանկի պարբերականների պատրաստումը, հաստատումը, հրապարակումը, բաշխումը և Կենտրոնական բանկի Ինտերնետի «Տնային էջում» տեղադրումն իրականացվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետներում:

4. Պարբերականների թողարկման պարբերականությունը և լեզուն սահմանվում են համաձայն ենթահավելված 1-ի:

Պարբերականների թողարկման պարբերականությունը և լեզուն

	Պարբերականի անվանումը	Թողարկման պարբերականությունը	Լեզուն*
1	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական նրանկի տեղեկագիր»	ամսական	հայերեն, ռուսերեն, անգլերեն
2	«Հայաստանի Հանրապետության կենտրոնա բանկի բանբեր»	եռամսյակային	հայերեն, ռուսերեն, անգլերեն
3	«Գնաձի հաշվետվություն»	եռամսյակային	հայերեն, ռուսերեն, անգլերեն
3.1	3.1 կետը ուժը կորցրել է 07.08.12թ. թիվ 213 Ն որոշմամբ		
4	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն»	տարեկան	հայերեն, ռուսերեն, անգլերեն
5	«Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը»	տարեկան	հայերեն, ռուսերեն, անգլերեն
6	«Ֆինանսական կայունության հաշվետվություն»	կիսամյակային	հայերեն, ռուսերեն, անգլերեն
7	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր»	տարեկան	հայերեն, ռուսերեն, անգլերեն
8	«Հայաստանի Հանրապետության հուշադրամներ»	տարեկան	հայերեն անգլերեն

* Ոչ հաշվետվական և ոչ նորմատիվ բնույթի նյութերից թարգմանվում են միայն տվյալ նյութերի ամփոփումները

(Ենթահավելված 1-ը փոխվել է, լրացվել է 16.03.10թ. թիվ 48Ն, 22.06.10թ. թիվ 142Ն, 03.04.12թ. թիվ 78Ն, 07.08.12թ. թիվ 213Ն որոշումներով):